

## ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

Quelques notes sur les eaux minerales du Caucase et en particulier sur la ville de Kislovodsk et sur la source de Narzan par Dr. Babaïan-Babaïew. Paris, 1909.—

Մի քանի ծանօթութիւններ Կովկասի հանքային ջրերի և մանաւորապէս Կիսլովոդսկ քաղաքի ու Նարզան աղբիւրի մասին: Փարիզ. 1909 թ.

Այս վերնագրով «Լեռնայի» խմբագրութիւնը ստացաւ բժշկապետ պ. Աւետիք Բաբայեանից իւր յօրինած և ներկայ 1909 թուին Փարիզում հրատարակած մի գրքոյկ, որ բաղկացած 22 մանրատիպ երեսներէից՝ արտատպած է Annales d'Hydrologie—«Ջրաբանական տարեգրութիւն» կոչուած 1909 թ. պարբերական հրատարակութիւնից: Մեր հայրենակից յարգելի Դօքտօրը, որ ահա մօտ ութը-ինը տարի ընակութիւն է հանտատել իւր ընտանիքով Ֆրանսիայի մայրաքաղաղում, մի տեսակ մանագէտ միջնորդ է հանդիսանում իւր հայրենիքի և Ֆրանսիական հասարակութեան միջև՝ հաղորդելով սորան մեր երկրի վերաբերմամբ բժշկական և ջրաբուժական գիտութեան մասին տեղեկութիւններ, որ անշուշտ հետաքրքիր պիտի լինին հայ ընթերցողներին համար ևս:

Առաջին անգամը չէ, որ պ. բժ. Բաբայեանը համանման գրութիւններով ու յօդուածներով հանգամանօրէն ծանօթացնում է Ֆրանսիացիներին Կովկասի հանքային ջրերի բուժական բաղադրութեան, բուժիչ յատկութեանց

և ընդհանրապէս մեր հանքաջրային հարստութեան հետ-  
Այսպէս օրինակ, 'ի թիւս այլոց, վերոյիշեալ «Ջրաբանա-  
կան տարէզութեան» նախընթաց հատորներում հրատա-  
րակած ունի արդէն իւր «Կրօնքացաւերի բժշկութիւնն Աբաս-  
թումանի ջրերով» յօդուածը, որպէս և 1899-ին «Թիֆ-  
լիսի հանքային աղբիւրներ» վերնագրով գրութիւնը  
«Archives générales d'hydrologie etc» պարբերականի  
մէջ, և այլն:

Այս անգամ նոյնպէս վերև առաջ բերած վերնագիր  
կրող գրքոյկով նա որպէս Ռուսաստանի կամ, ինչպէս ինքն  
է ասում, աւելի շուտ Կովկասի թղթակից-աշխատակից,  
իւր պարտաւորութիւնն է համարում հաղորդել ջրաբա-  
նական գիտութեամբ հետաքրքիր Ֆրանսիացիներին մի  
քանի ծանօթութիւններ մասնաւորապէս Նարզան աղբիւրի  
և Կիսլովօդսկ քաղաքի մասին, ուր չորս տարուց 'ի վեր  
ամեն ամառ, զբաղուած է ինքը գործնական բժշկութեամբ,  
ինչպէս և տասնու-հինգ տարի շարունակ Աբասթումանի  
հիւանդանոցում զինուորական բժիշկ-խորհրդատու եղած:  
Համառօտ կերպով յիշելով Անդրկովկասի և Հիւսիսային  
Կովկասի մէջ գտնուած յայտնի ու հասարակութեանը  
ծանօթ հանքային ջրերի բուժավայրերը՝ դօքտօրը անց-  
նում և մանրամասն նկարագրում է Ֆրանսիացիներին իւր  
զեկուցման առարկան՝ այն է Նարզան աղբիւրը և Կիսլօ-  
վօդսկ քաղաք-բուժավայրը: Այս մասին թէև ոչ շատ ըն-  
դարձակ, բայց և բաւականին օգտակար մասնագիտական  
տեղեկութիւններ է տալիս հետաքրքիր ընթերցողներին,  
որով և մեր հայրենակիցը իւրովսանն նպաստում է բժշ-  
կական և մասնաւորապէս ջրաբուժական գիտութեանը Կով-  
կաս երկրի վերաբերմամբ: